ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ՔՈՉԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՀ ԳԱԱ ՏԻ
ԵՐԵՎԱՆ

Հոդվածների ձևավորմանը ներկայացվող տեխնիկական պահանջները

Հոդվածը պետք է ներկայացված լինի հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով: Բնագրերի սկզբում պետք է ներկայացվեն հոդվածի անվանումը (ԳԼԽԱՏԱՌԵՐՈՎ՝ հավասարեցումը դեպի կենտրոն), հեղինակի/հեղինակների անունը, ազգանունը և հայրանունը (ԳԼԽԱՏԱՌԵՐՈՎ՝ հավասարեցումը դեպի ձախ), գիտական աստիճանը և կոչումը, աշխատանքի վայրը և պաշտոնն ամբողջությամբ, կոնտակտային տվյալները (էլեկտրոնային հասցե, բջջային հեռախոսահամար):

Հոդվածը պետք է ներկայացվի B5 ձևաչափով, 10-15 էջի սահմանում: Հոդվածի տեքստը պետք է լինի Sylfaen տառատեսակով՝ թղթի եզրերից թողնելով 2 սմ հեռավորություն, տառաչափը 11pt, 1.0 տողարանքով:

Հղումները պետք է ներկայացվեն յուրաքանչյուր էջի վերջում՝ տողատակում, շարունակական համարակալմամբ: Չի թույլատրվում հղումներ կատարել կեղծ ամսագրերին, լրատվական կայքերին, դասագրքերին և ուսումնամեթոդական ձեռնարկներին: Խրախուսվում են բարձր ազդեցության գործակից ունեցող ամսագրերում հրատարակված հոդվածներին կատարվող հղումները: Հղումների օրինակելի ձևը ներկայացված է տողատակում[1]:

Հղումները պետք է արտացոլվեն նաև հոդվածի վերջում ներկայացվող «Օգտագործված գրականության ցանկ» բաժնում, որտեղ յուրաքանչյուր սկզբնաղբյուր պետք է ներկայացվի բնագրի լեզվով (հայերեն, ռուսերեն, անգլերեն) ըստ այբբենական հերթականության: Գրականության ցանկում աղբյուրները ներկայացվում են հետևյալ հերթականությամբ.

- օրենքներ,հայեցակերգեր, իրավական ակտեր, ռազմավարություններ, հաշվետվություններ (reports),
- գրքեր, հոդվածներ (հերթականությունը՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն),
- կայք էջեր:

Յուրաքանչյուր մաս խմբավորվում է ըստ այբբենական կարգի:

Հոդվածի վերջում պետք է տեղակայվեն համառոտագիրն (200-300 բառ) ու 8-12 բանալի բառերը, երկուսն էլ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով (համառոտագրից առաջ պարտադիր նաև նշել հոդվածի վերնագիրը, հեղինակի անունը, ազգանունը, գիտական աստիճանը և կոչումը, աշխատանքի վայրը և պաշտոնն ամբողջությամբ):

Հոդվածի և համառոտագրի բովանդակությանը ներկայացվող պահանջներ

Հոդվածը պետք է պարունակի հետևյալ պարտադիր բաժինները.

1. **Ներածություն,** որում պետք է ներկայացված լինի հոդվածի արդիականությունը, նպատակը, խնդիրները և թեմայի ուսումնասիրվածության աստիճանը,
2. **Գրականության վերլուծություն**, որում պետք է ներկայացվի տվյալ թեմայի վերաբերյալ այլ հեղինակների մոտեցումները,
3. **Մեթոդաբանություն**, որտեղ պետք է ներկայացվեն այն մեթոդները, որոնցով իրականացվելու է հիմնական վերլուծությունը,
4. **Վերլուծություն**, որտեղ պետք է ներկայացվի հիմնական վերլուծությունը,
5. **Գիտական նորույթ,**
6. **Եզրակացություն**, որտեղ պետք է ներկայացվեն ստացված արդյունքները և դրանց կիրառման հնարավորությունը:

Համառոտագիրը ներկայացվում է 3 լեզուներով և պետք է պարունակի հետևյալ պարտադիր բաժինները.

- **Հոդվածի արդիականությունը,**
- **Նպատակը և խնդիրները,**
- **Մեթոդաբանությունը,**
- **Գիտական նորույթը,**
- **Ստացված հիմնական արդյունքները:**

---

[1]Գրքերին հղում տալիս՝ Պողոսյան Պ., Գրքի (մենագրության) վերնագիրը , տպագրության վայրը, տարեթիվը, էջը (գրականության ցանկում նշելիս՝ էջերի քանակը)
Հոդվածներին հղում տալիս՝ Պողոսյան Պ., Հոդվածի վերնագիրը, ամսագրի անվանումը, տարեթիվը, ամսագրի համարը, էջը, (գրականության ցանկում նշելիս՝ տվյալ հոդվածի էջերը ամսագրում)
Էլեկտրոնային կայքերին հղում տալիս՝ Կայքի անվանումը, էլ. հղումը (link), վերջին մուտքի ամսաթիվը